Ազգ
Azg
29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 199 (4093)

## «Թուրքիան սահմանը կբացի, երբ դուրս բերվեն զորքերը Ադրբեջանի տարածքից»

Թուրքիան իր սահմանը կբացի, երբ Հայաստանը դուրս կբերի իր զորքերը Ադրբեջանի օկուպացված տարածքներից: Այս մասին հայտարարել է Ադրբեջանում Թուրքիայի դեսպան **Հուլուսի Քըլըչը**: Մեկնաբանելով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի Ղարաբաղում արած այն հայտարարությունը, որ «Հայաստանի հետ Թուրքիայի սահմանի բացումը կարող է դրական անդրադարձ ունենալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա», Քըլըչը ընդգծել է, որ «Հայաստանը իրավունք չունի այդ հարցում պայմաններ դնելու Թուրքիայի առջեւ»: «Թուրքիան Հայաստանի հետ սահմանը փակել է 1993 թվականի ապրիլի 4-ին: Դա բողոքի նշան էր ընդդեմ Հայաստանի կողմից Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի եւ նրան կից Դաշտային Ղարաբաղի շրջանների օկուպացման», հայտարարել է Թուրքիայի դեսպանը: Թուրք դիվանագետն ավելացրել է, որ եթե Հայաստանը մտադիր է նորմալ հարաբերություններ հաստատել հարեւան երկրների հետ, ապա նա առաջին հերթին պետք է վերանայի իր «օկուպացիոն քաղաքականությունը», «դուրս բերի իր օկուպացիոն զորքերը Ադրբեջանի գրավված տարածքից», հաղորդում է «Նոյյան տապանը»:

## Եթերը ողողված է կրիմինալ սերիալներով

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Երեկ շարունակվող բյուջետային քննարկումների ժամանակ, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության, ինչպես նաեւ ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի համատեղ նիստում հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ **Գրիգոր Ամալյանը** ներկայացրեց բյուջետային հատկացումները 2009-ին, որոնք կազմելու են 95,7 մլն դրամ: Հանձնաժողովի նախագահ **Արմեն Աշոտյանն** ասելու բան ուներ. մի քանի շաբաթ առաջ հանձնաժողովը ՀՌԱՀ-ին ուղարկել է հարցադրումներով գրություն՝ կապված ՀՀ գովազդային օրենսդրության եւ եթերում հեռարձակվող գովազդի ծավալի եւ ռեժիմի, ինչպես նաեւ որոշ նորմերի հիշեցման եւ մի շարք այլ խնդիրների հետ: Հանձնաժողովի ստացած պատասխանում նշված է, որ ՀՌԱՀ-ը չի արձանագրել գովազդային օրենսդրության խախտում: Մինչդեռ դրանից օրեր անց ԱԺ-ում հնչած Հեռուստառադիոխորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանի՝ խորհրդի աշխատանքի վերաբերյալ 2006 թվականի հաշվետվությունը ներկայացրեց բազմաթիվ խնդիրներ, որոնք ոչ այնքան Հանրային ալիքի, ոչ միայն ՀՌԱՀ-ի հետ էին կապված, այլեւ առհասարակ եթերային պարունակության հետ ողջ հայկական եթերում. «Կարծում եմ, որ համարձակություն պետք է ունենանք հիմա արձանագրելու, եթերային պարունակությունը կամ այսպես կոչված հեռուստատեսային կոնտենտը չի համապատասխանում մի շարք գրված եւ չգրված օրենքներին», ասաց Աշոտյանը կանգ առնելով այդ անհամապատասխանության երեք բաղադրիչի վրա.

Տես էջ 3

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## Քրեական գործ՝ սանիտարահամաճարակային կանոնները խախտելու համար

Գլխավոր դատախազության մամուլի ծառայությունից հաղորդում են, որ քննարկելով Լոռու մարզում միջին մակարդակը գերազանցող վարակման դեպքերի ստուգումների արդյունքները, գլխավոր դատախազի ցուցումով Լոռու մարզի դատախազը հարուցել է քրեական գործ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (սանիտարահամաճարակային կանոնները խախտելը): Վարակի աղբյուրը պարզելու համար նշանակվել է փորձաքննություն, հանձնարարվել է նախաքննական մարմնին բացահայտել եւ պատասխանատվության ենթարկել բոլոր այն պաշտոնատար անձանց, որոնց գործողությունների կամ անգործության հետեւանքով մարզի տարածքում չեն պահպանվել սանիտարահամաճարակային կանոնները եւ դարձել զանգվածային վարակի պատճառ Վանաձոր եւ Ալավերդի քաղաքներում:

## Կոմիտասի պողոտայում սպանություն կատարածներից մեկը կալանավորված է

Մեր երեկվա համարում հաղորդել էինք, որ հոկտեմբերի 26-ին անհայտ անձինք ինքնաձիգից եւ ատրճանակից կրակ են արձակել «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ եւ սպանել 1965 թ. ծնված Հրաչյա Մաթեւոսյանին եւ հրազենային վնասվածքներ պատճառել 1976 թ. ծնված Հարություն Բ.-ին, որը տեղափոխվել է հիվանդանոց: Հաղորդվում է, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ նշված հանցագործությունը կատարել են 1979 թ. ծնված Հայկ Դավթյանը եւ 1976 թ. ծնված Հայկազ Հակոբյանը, որոնց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հոկտեմբերի 28-ին, ժամը 13.30-ին ոստիկանության Արաբկիրի բաժին է ներկայացել Հայկ Դավթյանն ու հանձնել «Կալաշնիկով» ինքնաձիգը եւ «Մակարով» ատրճանակը: Հայկ Դավթյանը կալանավորված է, կատարվում է նախաքննություն:

## Սուքիասյանների ընտանիքը պայքարելու է վարչական դատարանի վճռի դեմ

Ազգային ժողովի պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի ընտանիքին պատկանող «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի ղեկավարությունը որոշում է ընդունել «դադարեցնել արտադրությունը հետագա գործունեության անհնարինության պատճառով»: Հիշեցնենք, հոկտեմբերի 17-ին պետական եկամուտների կոմիտեից ստացվել է կատարողական թերթ՝ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ից, համաձայն Վարչական դատարանի կայացրած վճռի, հօգուտ պետական բյուջեի 4 միլիարդ 67 միլիոն 201 հազար 600 դրամ (ավելի քան 13 միլիոն դոլար) բռնագանձելու պահանջով: Հոկտեմբերի 21-ն ԴԱՀԿԱԾ աշխատակիցները այցելել են «Բջնի» գործարան, կատարել գույքագրում եւ արգելանք դրել անշարժ գույքի վրա: Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեց Սուքիասյանների ընտանիքին պատկանող «Սիլ կոնցեռնի» մամուլի քարտուղար Աննա Մկրտչյանը, իրենք «օրինական բոլոր մեթոդներով պայքարելու են վճռի եւ գործընթացի դեմ»:

## Եղանակը Երեւանում

Հոկտեմբերի 29-ին Երեւանում սպասվում է առանց տեղումների եղանակ: Ջերմաստիճանը գիշերը՝ +7...+9, ցերեկը՝ +15...+17 աստիճան:

ՀԱՄԱՌՈՏ

## «Սիրիան եւ արաբական երկրները հայ արաբագետների ուսումնասիրություններում»

Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը, Հալեպի մշակույթի պետական կենտրոնի հետ համատեղ, հոկտեմբերի 21-28-ը կազմակերպել է «Սիրիան եւ արաբական երկրները հայ արաբագետների ուսումնասիրություններում» խորագրով գրքերի ցուցահանդես, որում հայ արաբագիտական դպրոցը ներկայացրել է Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Ըստ ԱԳՆ հաղորդագրության, Հալեպի մշակութային կենտրոնի սրահում տեղի է ունեցել ցուցահանդեսի պաշտոնական բացման արարողությունը, որին ներկա են եղել Հալեպի մշակույթի պետական կենտրոնի եւ նահանգապետարանի պաշտոնատար անձինք, Բերիո թեմի առաջնորդը, Հալեպում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Ցուցահանդեսին ներկայացված է եղել մոտ 300 գիրք, որոնք վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանում հրատարակված ուսումնասիրություններ են արաբական երկրների պատմության, մշակույթի, հայ-արաբական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հալեպի մշակույթի պետական կենտրոնի նիստերի դահլիճում տեղի է ունեցել Նիկոլայ Հովհաննիսյանի դասախոսությունը՝ «Հայաստանը արաբագիտական ուսումնասիրությունների կենտրոն» թեմայով:

## Դպրոցական արձակուրդներն այլեւս չեն միացվելու

Անկախացումից հետո առաջին անգամ 1-11-րդ դասարանների աշակերտները կունենան աշնանային արձակուրդ, իսկ աշնանային, ձմեռային ու գարնանային արձակուրդները այլեւս չեն միացվելու: Ըստ «Նոյյան տապանի», արձակուրդները սկսվել են հոկտեմբերի 27-ին եւ կավարտվեն նոյեմբերի 2-ին, առաջին դասարանի աշակերտների արձակուրդները կտեւեն մինչեւ նոյեմբերի 9: Ասվածը վերաբերում է միայն երեւանյան դպրոցներին, որոնց մեծ մասն ապահովված է ջեռուցմամբ. մարզային դպրոցները կարող են ինքնուրույն սահմանել արձակուրդների ժամկետները՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ: Ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 25-ին եւ կտեւեն մինչեւ հունվարի 7-ը, սակայն 1-ին եւ 2-րդ դասարանների աշակերտները կհանգստանան մինչեւ հունվարի 21-ը:

## Բողոքի ակցիա ի պաշտպանություն Աբդուլլահ Օջալանի

Երեւանի Շահումյանի անվան հրապարակում քրդական համայնքը երեկ կազմակերպել էր բողոքի ակցիա՝ դատապարտելով թուրքական բանտում քրդերի առաջնորդ Աբդուլլահ Օջալանին ֆիզիկական բռնարարքների ենթարկելու փաստը: Ինչպես լրագրողների հետ զրույցում նշեց Հայաստանի քրդական համայնքի առաջնորդ **Կնյազ Հասանովը**, թուրքական իշխանությունները լայնածավալ պատերազմ են սկսել քուրդ ազատամարտիկների եւ ժողովրդի դեմ: Նրա խոսքով, Ա. Օջալանը ենթարկվում է ֆիզիկական հաշվեհարդարի եւ նրան մահապատժի ենթարկելու սպառնալիքներ են ներկայացվում: Այս մասին քուրդ ժողովուրդը իմացել է Ա. Օջալանի փաստաբանների միջոցով եւ այսօր ամբողջ աշխարհում քրդերը կազմակերպում են ցույցեր՝ դատապարտելով թուրքական իշխանությունների այս անմարդկային քայլը: Ցույցի ընթացքում նշվեց նաեւ, որ 2007 թվականին փորձաքննությամբ պարզվել է, որ Ա. Օջալանին նաեւ թունավորել են: Շահումյանի հրապարակից ցուցարարները երթով շարժվեցին դեպի ՄԱԿ-ի գրասենյակ:

## Արտգործնախարար Նալբանդյանը բացառիկ հարցազրույց է տվել BBC-ի թուրքական ծառայությանը



ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը պատասխանել է BBC-ի թուրքական ծառայության հարցերին: Հոկտեմբերի 28-ին «bbcturkish.com» կայքէջի հրապարակած բացառիկ հարցազրույցում նա անդրադարձել է հայ-թուրքական հարաբերություններին, ղարաբաղյան հիմնահարցին, Ռուսաստանի դիրքորոշմանը, Ադրբեջանում տիրող մթնոլորտին, ինչպես նաեւ սփյուռքի գործոնին:

Սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների եռակողմ հանդիպման առնչությամբ ՀՀ արտգործնախարարն ասել է. «Հանդիպման միտքը հարգարժան Բաբաջանինն էր: Նա այդ միտքը «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմի» առաջարկը քննարկելու մտադրությամբ առաջ էր քաշել դեռեւս Երեւանում, իսկ ես իմ համաձայնությունն էի տվել: Նյու Յորքի հանդիպմանը միմիայն քննարկել ենք պլատֆորմի հարցը: Ադրբեջանի հետ առկա խնդիրներով բանակցությունները ընթանում են Մինսկի խմբի շրջանակներում: Սա միջազգային հանրության աջակցությունը վայելող ազդեցիկ կառույց է: Անիվը վերստին հայտնաբերելու ո՛չ ցանկություն ունենք, ո՛չ էլ դրա կարիքը: Թեեւ Ադրբեջանի նախագահական ընտրություններից հետո աշխուժացում ենք ակնկալում ղարաբաղյան կարգավորման բանակցություններում, սակայն ես դա չեմ պայմանավորում Հայաստան-Թուրքիա երկխոսությամբ: Սկզբնավորվել է Թուրքիայի հետ մեր հարաբերությունների նորմալացման գործընթացը, եւ ես այդ առումով վերին աստիճանի լավատես եմ»:

«Ինչպե՞ս եք գնահատում Մոսկվայում Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպում կազմակերպելու ՌԴ նախագահ Մեդվեդեւի նախաձեռնությունը» հարցին Նալբանդյանը պատասխանել է. «Ռուսաստանը միշտ կառուցողական է եղել ղարաբաղյան բանակցություններում: Չմոռանանք, որ 1994-ի զինադադարը ստորագրվել է Ռուսաստանի միջնորդությամբ: 2001-ին քվականին մոտ էինք հաջողության, սակայն Հեյդար Ալիեւն ասաց, որ Ադրբեջանի հասարակությունը պատրաստ չէ դրան»:

Տես էջ 2

